

01/10.1/8906-09

2009-12-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Արմեն Ռուստամյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հանգուցալուծումը զինված հակամարտության վերածելու Ադրբեջանի պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարության նախագծի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համար ընդունելի տարբերակը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված հայտարարության նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾԵԼՈՒ,  
ԷՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՆԳԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԽՍՂԱՂ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒ  
ԱԴԻԲԵԶԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝

**ընդգծելով** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման և կազմավորման գործընթացի լիովին և անթերի համապատասխանությունը միջազգային իրավունքին ու այդ ժամանակահատվածում գործող ԽՍՀՄ օրենսդրությանը,

**չեչտելով** Խորհրդային Միության փլուզմամբ նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարածքում երկու իրավահավասար անկախ պետությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ձևավորումը,

**փաստելով** ԼՂ բնակչության ինքնորոշման իրավունքի իրականացման գործընթացին ի պատասխան՝ ադրբեջանական իշխանությունների կողմից որդեգրված էթնիկ գտումների քաղաքականության և ուժային մեթոդներով հարցի լուծման ճանապարհը, դրսևորված՝

- Ադրբեջանական ԽՍՀ-ի բոլոր բնակավայրերում՝ Սումգայիթ, Կիրովաբադ, Շամխոր, Բաքու և այլն 1988-1990 թթ. ադրբեջանական իշխանությունների կողմից հայ բնակչության զանգվածային տեղահանումներով, ջարդերով, բռնություններով ու սպանություններով,

- ԼՂՀ և հարակից տարածքներում իր բնօրրանում ապրող հայ բնակչության նկատմամբ իրականացրած էթնիկական գտումներով,

- վարձկան գրոհայինների և միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից 1991-1994 թթ. սանձազերծած լայնածավալ ռազմական ագրեսիայով,

**վերահաստատելով** Հայաստանի Հանրապետության հանձնառությունն այն մասին, որ հանդիսացել և հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և նրա բնակչության անվտանգության երաշխավորը,

**արձանագրելով**, որ Ադրբեջանի ուժային քաղաքականության արդյունք հանդիսացող բազմահազար մարդկային անդառնալի կորուստների, անկախ ազգային պատկանելությունից, մեկ միլիոնից ավելի փոխատականների ու տեղահանվածների, ծանր նյութական կորուստների ու ԼՂՀ-ի և Ադրբեջանի փոխադարձ վերահսկողության տակ տարածքների անցնելու անմիջական պատասխանատուն ագրեսոր Ադրբեջանն է,

**վկայակոչելով Ադրբեջանի կողմից շարունակվող՝**

- արցախյան հիմնախնդրի էության և հակամարտության ծագման ու ծավալման պատճառների խեղաթյուրումներն ու նենգափոխումները, հակամարտության կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, որպես բնակցային լիիրավ կողմ չճանաչելու Ադրբեջանի մարտավարությունը, որոնք նպատակ են հետապնդում խուսափել հակամարտության բուն առարկան հանդիսացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի և անվտանգության հետ կապված հարցերի առաջնահերթ լուծումից և հակամարտության հետևանքների համար պատասխանատվությունից,

- ռազմատենչ հայտարարությունները, հայատյացության և հայկական մշակութային ժառանգության ոչնչացմանն ուղղված քաղաքականությունը, ինչը խոչընդոտում է կողմերի միջև փոխվստահության ձևավորման հնարավորությունները,

**համոզված լինելով**, որ արցախյան հիմնախնդրի հանգուցալուծման, ռազմական ճանապարհի բացառման և հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի անշրջելիության և արդյունավետության ապահովման երաշխիքը եղել և մնում է ժողովուրդների

իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի սկզբունքի անվերապահ և առանց սահմանափակումների կիրառումը՝

#### Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Մ Է

Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները, հակամարտության ծագման և հետևանքների պատճառների խեղաթյուրումներն ու նենգափոխումները, ատելություն սերմանող հակահայկական կոչերն ու գործողությունները, իր կողմից կատարված ոճրագործությունների ծանրությունը չընդունելը շարունակում են հակամարտության կարգավորման սկզբունքային ու առանցքային խոչընդոտ հանդիսանալ և այս քաղաքականության շարունակության հետևանքների ամբողջ պատասխանատվությունը կրում է Ադրբեջանը:

Նախագիծ  
Պ-770-17.11.2009-ԱՀ-012/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հանգուցալուծումը զինված հակամարտության վերածելու  
Աղբբեջանի պատասխանատվության մասին**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը.

Վկայակոչելով՝

- 1988 թվականի փետրվարին Աղբբեջանի Սումգայիթ քաղաքում մի քանի օր շարունակ իրականացված եւ նույն թվականին ԽՍՀՄ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի եւ Վորոնեժի մարզային դատարանի կայացրած համապատասխան դատավճիռներով հաստատված հայերի սպանություններն ու խոշտանգումները, նրանց պատկանող գույքի եւ ունեցվածքի թալանն ու ոչնչացումը,
- 1990 թվականի հունվարի 13-ից -19 -ին Աղբբեջանի մայրաքաղաք Բաքվում կազմակերպված եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի փակ նիստում գործող իշխանության համապատասխան պաշտոնյաների կողմից փաստված հայ բնակչության զանգվածային ջարդերն ու հալածանքները,
- Աղբբեջանի հայաբնակ բոլոր եւ ԼՂՀ բազմաթիվ բնակավայրերում աղբբեջանական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացված լայնածավալ բռնություններն ու սպանությունները,
- ԼՂՀ եւ հարակից տարածքներում իր բնօրրանում ապրող հայ բնակչության բռնի տեղահանումներն ու նրանց նկատմամբ իրագործված էթնիկ զտումները,

Փաստում է՝

- Ադրբեջանը ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման խաղաղ եւ օրինական գործընթացի, որդեգրելով ցեղասպանական եւ էթնիկ զտումների քաղաքականություն, դիմել է ուժի ապօրինի կիրառման եւ միջազգային հայտնի ահաբեկիչների եւ վարձկանների ներգրավումով 1991-1994թթ. սանձազերծել է լայնամասշտաբ պատերազմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ:

Հայտարարում է՝

- հակամարտության գոտում առկա իրողությունները հետեւանք են օրինապատշաճ կերպով ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ սանձազերծված Ադրբեջանի զինված ագրեսիայի հետմղման, ապագայում նմանատիպ ագրեսիվ գործողությունների կանխարգելման եւ այդ նպատակով համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 51 հոդվածի Լեռնային Ղարաբաղի բնակչության կազմակերպած օրինական ինքնապաշտպանության,

- Հայաստանը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության ռազմականացումից ի վեր հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի անվտանգության եւ ինքնորոշման իրավունքի իրականացման երաշխավորը,

- Ադրբեջանը, որպես նախահարձակ եւ ագրեսոր երկիր, լիովին պատասխանատու է իր կողմից սանձազերծված պատերազմի եւ նրա հետեւանքների, անկախ ազգային պատկանելիությունից բոլոր փախստականներին եւ տեղահանված անձանց պատճառված կորուստների եւ զրկանքների համար եւ բացի այդ պարտավոր է փոխհատուցել ադրբեջանահայության կրած նյութական եւ բարոյական վնասները,

- Ադրբեջանի կողմից շարունակվող հակամարտության ծագման եւ ծավալման պատճառների խեղաթյուրումները, ռազմատենչ հայտարարությունները, հայատյացության եւ հայկական մշակութային ժառանգության ոչնչացմանն ուղղված վանդալիզմի դրսեւորումները խափանում են կողմերի միջեւ փոխվստահության ձեւավորման հնարավորությունները,

- հակամարտության կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, որպես բնակցային իրավահավասար կողմ չճանաչելու Ադրբեջանի մարտավարությունը ձախողում է արդյունավետ եւ ամբողջական բնակացությունների կայացման հնարավորությունը եւ, ըստ էության, նպատակ է հետապնդում խուսափել հակամարտության բուն առարկան հանդիսացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի եւ անվտանգության հետ կապված հարցերի առաջնահերթ լուծումից,

- ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծման ռազմական ճանապարհի բացառման եւ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի անշրջելիության եւ արդյունավետության ապահովման միջոցը եղել եւ մնում է բնակցություններում ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի սկզբունքի անվերապահ եւ առանց սահմանափակումների կիրառումը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ադրբեջանը, շարունակաբար աղավաղելով իրականությունը, նենգափոխելով եւ խեղաթյուրելով փաստերը, ձգտում է միջազգային հանրության մոտ կեղծ պատկեր ձեւավորել հակամարտության ծագման եւ ծավալման վերաբերյալ: Միեւնույն ժամանակ Ադրբեջանը, թաքցնելով արյունալի հակամարտության հանգեցրած իր հանցավոր գործողությունները եւ իրական ագրեսորին զոհ, իսկ զոհին որպես ագրեսոր ներկայացնելով, փորձում է իր իսկ կողմից սանձազերծած պատերազմի հետեւանքների ողջ պատասխանատվությունը բարդել հայկական կողմի վրա:

Մինչդեռ բազմաթիվ եւ հատկապէս ոչ հայկական աղբյուրներ փաստել են Ադրբեջանի կողմից կազմակերպված եւ իրականացված հայերի ջարդերն ու հետապնդումները: Մասնավորապէս, Սումգայիթում տեղի ունեցած ոճրագործությունը փաստված է անմիջապէս դեպքերից հետո կատարվածի վերաբերյալ, գործիչնակ, հենց Սումգայիթ քաղաքի գործադիր կոմիտէի նախագահ Ռ. Էմինբեյլու ներկայացրած զեկուցագրով, ինչպէս նաեւ, 1988թ. նոյեմբերի 18-ին ք. Մոսկվայում ԽՍՀՄ Գերագույն դատարանի քրեական գործերով կոլեգիայի վճռով եւ 1988թ. դեկտեմբերի 20-ին ՌԽՖՍՀ Վորոնեժի մարզային դատարանի կողմից կայացրած դատավճռով, իսկ հունվարի 13-ից-19-ը Բաքվում հայերի նկատմամբ իրականացված զանգվածային ջարդերը վավերագրված են 1990 թվականի փետրվարի 19-ին եւ մարտի 1-ին գումարված ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 3-րդ նստաշրջանի փակ նիստերում ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ.Ա. Կրյուչկովի եւ ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Վ.Վ. Բակատինի կողմից ներկայացված փաստերով:

Սակայն, պատմությունը նենգափոխելու եւ գլխիվայր շուտ տալու պետական մարտավարությամբ, Ադրբեջանը օգտվելով հատկապէս միջազգային խորհրդարանական կազմակերպություններում շատերի անտեղյակությունից եւ հարցի էությանը ծանոթ չլինելու հանգամանքից, ձգտում է կարգավորման՝ միմյանց հետ շաղկապված բաղադրիչների, փաթեթից առաջնահերթ լուծման համար առանձնացնել տարածքների եւ փախստականների հարցերը եւ ձեռք բերել այդ խնդիրների վերաբերյալ պահանջատիրոջ կարգավիճակ: Դրա հիման վրա, Ադրբեջանը անթաքույց նպատակ է հետապնդում հող ստեղծել իր հնարավոր նոր ագրեսիայի արդարացման համար՝ պահպանելով հակամարտության կարգավորման ռազմական ճանապարհը:

Առաջնահերթ խնդիր է միջազգային ատյաններում վերակազնել կատարվածի իրական պատկերը եւ մատնանշելով Ադրբեջանի պատասխանատվությունը հակամարտության սրման, դրա հետեւանքների եւ չկարգավորման վերաբերյալ, հակազդել նրա կողմից իրականացվող քաղաքականությանը՝ ակտիվորեն ներգրավելով այդ գործում խորհրդարանական դիվանագիտությանը: